Ապրանքի մակնշումը ներմուծողի միջոցով

Ի՞նչ է մակնշման համակարգը և ինչպե՞ս է այն աշխատում

Մակնշման համակարգը ներառում է ապրանքի մակնշումը և շրջանառության ողջ ընթացքի վերահսկումը՝ արտադրությունից մինչև մանրածախ վաճառք: Համակարգը պահպանում է ապրանքի հետ կապված բոլոր գործառնությունների՝ արտադրության և ներմուծման, վաճառքի տարածքում տեղաբաշխման, իրացման, և շրջանառությունից հանելու մասին բոլոր տվյալները:

Ապրանքը մակնշվում է արտադրողի կամ ներմուծողի կողմից՝ պատվիրելով թվային **DataMatrix** ձևաչափի ծածկագրեր Ռուսաստանի Դաշնության «Честный ЗНАК» համակարգում: Ծածկագրերը անհրաժեշտ է պահանջել նախապես՝ նախքան ապրանքների արտահանումը կամ ներմուծումը:

Ծածկագրերը պետք է փակցվեն արտահանվող ապրանքի վրա՝ նախքան սահմանը հատելը: Սա նշանակում է, որ ապրանքը պետք է մակնշվի նախքան օրինական սահմանը հատելը:

- Յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա իր նույնականացման համարը (նույնացուցիչ):
- Մատակարարման ողջ ընթացքում ամեն ապրանքի համար յուրաքանչյուր գործողությունն գրանցվում է մակնշման համակարգում՝ ըստ զույգի նույնացուցիչի:
- Երբ ապրանքը վաճառվում է սպառողին, այդ ապրանքի նույնացուցիչը դուրս է հանվում համակարգից:
- Յուրաքանչյուր նույնացուցիչի գոյատևումը փակ է. Այն սկսվում է արտադրության փուլում և ավարտվում է իրականացման արդյունքում, ուստի այդ ընթացքում փոխել նույնացուցիչը անհնար է:

DataMatrix ձևաչափի մակնշում

Որպես մակնշման ծածկագիր ընտրվել է GS1 DataMatrix (օրինակը՝ ձախկողմում)

DataMatrix-ը հավելյալ տվյալներով շտրիխկոդ է. Այն կատարելապես ընթեռնելի է նույնիսկ այն դեպքում, երբ լինում է մասամբ վնասված: DataMatrix-ը կոմպակտ է և քիչ տեղ է զբաղեցնում փաթեթի վրա: DataMatrix-ի օգնությամբ կարելի է կոդավորել մեծ քանակությամբ ինֆորմացիա:

Մակնշման ծածկագիրը ներառում է **GTIN-ը, ապրանքի սերիական համարը և ստուգման ծածկագիրը**:

GTIN (Global Trade Item Number) – 14 թվանշանային մակնշման ծածկագիր է, որը մշակվել է GS1 ասոցիացիայի կողմից: Սա իրենից ներկայացնում է վաճառողի ծածկագրի էլեկտրոնային տարբերակը և ուղեկցվում է մի շարք հատկանիշներով, որոնք արտադրողը պետք է պատրաստի ապրանքը բնութագրելու համար:

Անհատական սերիական համարը – 13 նիշանոց թվային կամ այբբենական և թվային հաջորդականություն է և կարող է գեներացվել շրջանառության մասնակցի հաշվառման համակարգի միջոցով: Այն հատկացվում է յուրաքանչյուր ապրանքի համար և GTIN-ի հետ միասին ծառայում է որպես ապրանքի եզակի նույնացուցիչ:

Ստուգման ծածկագիրը (գաղտնագրման հաջորդականությունը կամ ծպտյալ պոչը) - յուրաքանչյուր DataMatrix-ի համար «էլեկտրոնային ստորագրություն»է, որը թույլ է տալիս վերահսկել ապրանքի իրացումը դրամարկղի միջոցով: Այն գեներացնում է մակնշման համակարգի օպերատորը՝ ծածկագրման տեխնոլոգիաների հիման վրա: Իր օգնությամբ ստուգվում է ծածկագիրի օրինականությունը:

Ինչպե՞ս մակնշել ապրանքը ներմուծողի միջոցով

1. Արտահանողը ստանում է GTIN-ը GS1 Հայաստանի ներկայացուցչությունում: Հրահանգների ծանոթացեք այստեղ (http://www.gs1am.org/node/18)
2. Ներմուծողը գրանցվում է ՌԴ «Честный знак» համակարգում (հրահանգների ծանոթացեք այստեղ՝ https://xn--80ajghhoc2aj1c8b.xn--p1ai/business/projects/footwear/)
3. Ապրանքը ներմուծողի մանրամասն հրահանգները հասանելի են մակնշման և ապրանքի շրջանառության վերահսկման պետական «Честный ЗНАК» (https://честныйзнак.рф/business/projects/) համակարգի պաշտոնական կայքում:

4. Ներմուծողը ներմուծվող ապրանքների համար հայտերը ներկայացնում մակնշման ծածկագրերի (DataMatrix) գեներացման համար:

5. Մակնշման ծածկագրերը ստանալուց հետո ներմուծողը ցանկացած մատչելի եղանակով փոխանցում է դրանք արտահանողին:

6. Արտահանողը փակցնում է մակնշման ծածկագրերը արտահանվող ապրանքի վրա՝ նախքան ՌԴ սահմանը հատելը:

a. Ապրանքի մակնշման ծածկագիրը փակցվում է ապրանքի տուփի, պիտակի կամ բուն ապրանքի վրա (շրջանառության մասնակցի ընտրությամբ):

b. Մակնշման ծածկագիրը փակցվում է հատուկ սարքավորումների միջոցով (հրահանգներին ծանոթացեք հետևյալ հղմամբ՝ http://www.r-id.ru/equipment/markirovka-obuvi/#ancor-007) կամ ձեռքով՝ կախված շրջանառության մասնակցի ունեցած սարքավորումներից:

7. Այնուհետև ապրանքը ուղարկվում է ՌԴ:

8. Ներմուծողը ապրանքները դնում է շրջանառության մեջ՝ ՌԴ «Честный знак» մակնշման համակարգում: